ԿԴ/0940/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6 օգոստոսի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2026 թվականի հուլիսի 2-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Ներսես Քաջիկի Մանուկյանի, Սուրեն

Արտակի Հայրապետյանի և Սերյոժա Սպարտակի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 58213926 (ԿԴ/0940/01/26) քրեական վարույթը:

1.1. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա.Հարությունյան) 2026 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հուլիսի 17-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Գ.Պողոսյան) 2026 թվականի հուլիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի օգոստոսի 3-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Ներսես Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ (…), չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն*

իրականացնելու՝ այդպիսիք ձեռք բերելու, պահելու կամ իրացնելու թույլտվություն, Սուրեն Արտակի Հայրապետյանի և Սերյոժա Սպարտակի Հովհաննիսյանի հետ նախնական համաձայնությամբ՝ խմբի կազմում, ՀՀ-ում իրացնելու նպատակով փորձել են ապօրինի ձեռք բերել ԻԻՀ քաղաքացի ումն Ջաֆար Բահրուզի Ռահիմի կողմից ԻԻՀ-ից մաքսանենգությամբ՝ առանց մաքսային հսկողության, Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով և ՀՀ պետական սահմանով ապօրինի ՀՀ տեղափոխված, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման հավելված N 1-ով նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ 5491,55 գրամ հաստատուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը (...)»[1]:

4.1. Նույնաբովանդակ ենթադրյալ արարքների համար քրեական հետապնդում է հարուցվել նաև մեղադրյալներ Սերյոժա Հովհաննիսյանի և Սուրեն Հայրապետյանի նկատմամբ[2]:

5. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են ***** *******, այն է՝ ***** ****** ****** ****** ******** ********** ******* ******** ******* *******՝ մասնավորապես՝ երեք մեղադրյալներից երկուսը, չորս պաշտպաններից երեքը և հինգ վկաներից երեքը (հարկ է նշել, որ մեկ վկայի նկատմամբ կիրառված է հատուկ պաշտպանության միջոց) բնակվում են ***** *******:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և մեղադրյալների համաձայնությունը, կարևորելով արդարադատության շահը և պահպանված լինելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/0940/01/26 քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և քրեական գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (...)»[3]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...)*

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 109-113:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթեր 38-42, 103-107:
[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 91-97:

*Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թիվ ԿԴ/0940/01/26 քրեական գործի դարաձքային ընդդատությունը փոխվել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցվել չէր կարող, քանի որ ինչպես պարզ է դառնում (...) ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի «Քրեական գործի դարաձքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումից ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը, մասնավորապես՝ ի թիվս այլ անձանց չորս պաշտպաններից երեքը բնակվում են ***** *******, սակայն ինչպես բխում է սույն քրեական գործի նյութերում, այդ թվում՝ հենց ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից պաշտպաններ Արման Խաչատրյանին և Դիանա Վարդանյանին դատական նիստի տեղի և ժամանակի վերաբերյալ ուղարկված ծանուցումներից, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական՝ advocates.am կայքում առկա տվյալներից պաշտպաններ Արման Խաչատրյանի և Դիանա Վարդանյանի ինչպես բնակության, այնպես էլ գործունեության հիմնական վայրերը գտնվում են ***** ******* դուրս, այսինքն՝ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների, ոչ թե մեծամասնությունը, մասնավորապես՝ ի թիվս այլ անձանց չորս պաշտպաններից երեքը բնակվում են ***** *******, այլ ընդհակառակը չորս պաշտպաններից հենց երեքը չեն բնակվում***** *******:*

*Ինչ վերաբերում է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի «Քրեական գործի դարաձքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման «Դատաքննության ընթացքում հայտնած դիրքորոշումները» մասում արձանագրված այն հանգամանքին, որ «պաշտպան Ա.Խաչատրյանը միացավ գործընկերոջ դիրքորոշմանը և հայտնեց, որ իր և պաշտպան Դիանա Վարդանյանի փաստաբի գործունեության վայրը ևս գտնվում է ***** *******, մասնավորապես, գործունեությունը ծավալում են՝ ***** *****, ********* *****, ** ****, ** *******, ծանուցման հասցեն է՝ ***** *****, ****** ******, * **** ******», ապա վերը*

նշվածի մասով նախ հարկ է արձանագրել, որ դատական նիստի ձայնագրության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ պաշտպան Ա.Խաչատրյանը դատարանին չի հայտնել, որ ինքը և մյուս պաշտպան Դ.Վարդանյանը բնակվում են ***** *******, ինչպես որ արձանագրված է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի «Քրեական գործի դարաձքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման պատճառաբանական մասում, այլ նշել է, որ իրենք ուղղակի հաշվառված են ***** *******, ** ******* ***** ******** ***** հասցեն իրենց ծանուցման հասցեն է, գործունեություն իրականացնում են, գրասենյակը գտնվում է ***** *******, հաշվառման հասցեները ևս ***** ******* են գտնվում, պարզապես հիմա ամառ է գնում են...: Նշել է նաև որ որպես կանոն իրենք ծանուցումները ստանում են ***** ****** ***** ****** * ******* գտնվող փոստային ծառայությունից, սակայն ամռան շոգով պայմանավորված նաև նշել են ******* ***** ծանուցման հասցեն, այսինքն՝ երկու հասցեներով էլ իրենք դատավարական փաստաթղթերը ստանում են, ամեն դեպքում ամեն օր մեկնում են ***** *****, գրասենյակը գտնվում է ***** ****** ********* ****** ***** ***** ***** հասցեում, դատարանի այն հարցին, թե հետագայում վերը նշված հասցեով ուղարկվի ծանուցումները, պաշտպան Ա.Խաչատրյանը նշել է, որ իրենց նախընտրելի է ***** ****** * հասցեում գտնվող փոստային ծառայության գրասենյակ ուղարկել, քանի որ իրենք նախընտրում են այդ հասցեն, որպեսզի հաճախակի ծանուցման հասցեներ չփոխեն, որպիսի պայմաններում Դատարանը հարկ է համարում նախ արձանագրել, որ պարզ չէ և ընդհանրապես անհասկանալի է, թե ինչպես է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը «Քրեական գործի դարաձքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման պատճառաբանական մասում նշել, որ «Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են ***** *******, (...) չորս պաշտպաններից երեքը (...)», քանի որ ինչպես քրեական գործի նյութերը, այնպես էլ դատական նիստում պաշտպան Ա.Խաչատրյանի կողմից արված հայտարարությունները՝ վերջինիս և մյուս պաշտպան Դ.Վարդանյանի ***** ******* բնակվելու վերաբերյալ որևէ տվյալ չեն պարունակում: Բացի այդ հարկ է

արձանագրել նաև, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, այլ ոչ թե այն դեպքում, երբ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը գրասենյակ են ունենում, կամ գործունեություն են ծավալում, կամ նախընտրում են իրենց հասցեագրված ծանուցումները ստանալ առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում առկա փոստային բաժանմունքից:

Տվյալ դեպքում հարկ է արձանագրել նաև, որ գրասենյակ ունենալը, գործունեություն ծավալելը, իրենց նախընտրած վայրում գտնվող փոստային բաժանմունքից ծանուցումներ ստանալը և բնակվելը տարբեր եզրույթներ են և ունեն միմյանցից ակնհայտորեն տարբերվող իմաստներ:

*Այսուհանդերձ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ դատական նիստում պաշտպան Ա.Խաչատրյանի կողմից արված հայտարարությունների վերաբերյալ սույն քրեական գործի նյութերում որևէ փաստաթղթային տվյալ առկա չէ, այլ ընդհակառակը առկա է համապատասխան փաստական տվյալներ այն մասին, որ պաշտպաններ Արման Խաչատրյանի և Դիանա Վարդանյանի ինչպես բնակության, այնպես էլ գործունեության հիմնական վայրերը գտնվում են ***** ******* դուրս, դրա մասին է վկայում նաև քրեական գործում առկա հենց վերը նշված պաշտպանների կողմից կազմված պաշտոնեական փաստաթղթերում իրենց հասցեների վերաբերյալ արված նշումները:*

*Բացի վերը նշվածը հարկ է արձանագրել նաև, որ ի վերջո քրեական գործի նյութերում առկա տվյալները և պաշտպան Ա.Խաչատրյանի դատական նիստում արված հայտարարությունները համակցության մեջ գնահատելու արդյունքում կարելի է հանգել հետևության, որ նա և մյուս պաշտպան Դ.Վարդանյանը հիմնական գործունեություն են ծավալում և բնակվում են ** ******* ******, սակայն ***** ******* ունեն գրասենյակ և ինչու չէ նաև ժամանակ առ ժամանակ կամ որոշակի գործունեություն են ծավալում նաև ***** *******:*

Այսուհանդերձ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ քրեական գործի նյութերում անձի բնակության վայրի վերաբերյալ փաստաթղթավորված տվյալների առկայության պարագայում, դրան հակասող միայն ու բացառապես այդ անձի դատական նիստում առանց որևէ փաստաթղթային հիմնավորման արված հայտարարության արդյունքում քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելն անթույլատրելի է, քանի որ այդ պարագայում է կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ անձը քրեական գործի քննությունն իրեն նախընտրելի առաջին ատյանի մեկ այլ դատարանում իրականացնելու համար հայտարարի, որ ինքը բնակվում է համապատասխան վայրում:

Այլ կերպ ասած՝ կարող է ստացվել մի իրավիճակ, երբ քրեական գործերի տարածքային ընդդատությունն անընդհատ կարող է փոխվել, բացառապես պայմանավորված դատական նիստում կողմի իրեն նախընտրելի առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելու վերաբերյալ արված հայտարարության արդյունքում, ինչը չի կարող բխել արդարադատության շահից և կարող է հանգեցնել քրեական գործերի շրջապտույտի:

*Բացի վերը նշվածը հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասում նշված «վարույթի մասնավոր մասնակիցներ և վկաների մեծամասնություն» եզրույթը չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով և արձանագրվի, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը, ի թիվս այլ անձանց մասնավորապես՝ չորս պաշտպաններից երեքը (սույն որոշմամբ արդեն իսկ արձանագրվել է չորս պաշտպաններից երեքի ոչ թե ***** *******, այլ ***** ******* դուրս բնակվելու հանգամանքը), որոնք հանդիսանում են մասնավոր հիմունքներով պաշտպանություն իրականացնող փաստաբաններ, բնակվում են ***** *******, քանի որ քրեական գործի յուրաքանչյուր փուլում պաշտպանները կարող են փոխարինվել և դրա արդյունքում ևս կարող է առաջանալ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու դատական շրջապտույտ:*

Ավելին՝ Դատարանի համար պարզ չէ և ընդհանրապես անհասկանալի է նաև, թե սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան

փոխանցելու արդարադատության շահն ինչում է կայանում, քանի որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել վերը նշված հարցին, այդուհանդերձ՝ թեև սույն որոշման 4-րդ կետում արդեն իսկ արձանագրվել է վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բացակայության հանգամանքը, հարկ է փաստել նաև, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելը չի բխում նաև արդարադատության շահից, քանի որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության ձևավորումը ինչպես բխում է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումից պայմանավորված է եղել երեք մասնավոր հիմունքներով պաշտպանություն իրականացնող պաշտպանների մասնակցությամբ:

(...)

Մինչդեռ, սույն դեպքում ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը որքանով է անհրաժեշտ արդարադատության շահի տեսանկյունից: Հաշվի առնելով սույն գործի մասնավոր մասնակիցների և վկաների կողմից ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայանալուն խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ փաստարկների բացակայությունը, ինչպես նաև այն, որ սույն գործով քննությունն իրականացվել է ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի նստավայրում, հարկ է փաստել, որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է

փոխանցել՝ վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում՝ դրսևորելով չափազանց ձևական մոտեցում:

Այսուհանդերձ հարկ է արձանագրել նաև, որ թվով երեք մասնավոր հիմունքներով պաշտպանություն իրականացնող պաշտպանները մեղադրյալների պաշտպանությունը ստանձնելիս քաջատեղյակ են եղել, որ սույն քրեական գործի քննությունը պետք է իրականացվի ենթադրյալ հանցավոր արարքների կատարման տարածքում՝ ՀՀ Կոտայքի մարզում և դրանով հանդերձ ստանձնել են մեղադրյալների շահերի պաշտպանությունը:

*(…) Ամփոփելով սույն որոշման 4-րդ կետում արձանագրված հանգամանքները՝ ակնհայտ է, որ «Քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու միջնորդությունը քննության առնելու մասին» ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հուլիսի 17-ի որոշման կայացման պահին ***** ****** չի հանդիսացել սույն քրեական գործի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայրը, ինչը նշանակում է, որ ***** ****** չէր կարող գնահատվել որպես վերը նշված անձանց մեծամասնության բնակության վայր, իսկ թիվ ԿԴ/0940/01/26 քրեական գործը չէր կարող ըստ տարածքային ընդդատության փոխանցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, ուստի Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԿԴ/0940/01/26 քրեական գործի տարածքային ընդդատությանը և գտնում է, որ վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»*[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 114-117:

փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «*(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

11.1. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը մշտապես ընդգծել է, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- վարույթին ներգրավված են երեք մեղադրյալ, չորս պաշտպան և հինգ վկա: Երեք մեղադրյալներից երկուսը և հինգ վկաներից երեքը բնակվում են ***** **********: Պաշտպան Հ.Ավագյանի բնակության վայրն է ***** ******, պաշտպան Կ.Ստեփանյանի բնակության վայրն է ******** *****, իսկ պաշտպաններ Ա.Խաչատրյանի և Դ.Վարդանյանի գործունեության վայրը, ըստ ՀՀ

փաստաբանների պալատի պաշտոնական՝ www.advocates.am կայքի, ******** ***** է: Վերջիններիս դատական ծանուցագրերն ուղարկվել են ինչպես ******* ******, այնպես էլ ***** ******* տեղակայված հասցեներով:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ առկա է մեղադրյալների համաձայնությունը վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, գտել է, որ արդարադատության շահի տեսանկյունից քրեական վարույթի հետագա քննությունը պետք է իրականացվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, հաշվի առնելով վարույթի տարածքային ընդդատության հարցի քննարկման ընթացքում պաշտպան Ա.Խաչատրյանի կողմից արված հայտարարությունը, ինչպես նաև վարույթի նյութերում և այլ պաշտոնական աղբյուրներում պաշտպաններ Ա.Խաչատրյանի և Դ.Վարդանյանի՝ ***** ******* բնակվելու վերաբերյալ տվյալների բացակայությունը, փաստել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում բնակվող վարույթի մասնավոր մասնակիցները և վկաները մեծամասնություն չեն կազմում:

Բացի այդ, արձանագրելով, որ սույն դեպքում որևէ հիմնավորում չի ներկայացվել, թե քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը որքանով է անհրաժեշտ արդարադատության շահի տեսանկյունից, և հաշվի առնելով վարույթի մասնակիցների կողմից դատարան ներկայանալուն խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ փաստարկների բացակայությունը, ինչպես նաև այն, որ սույն գործով քննությունն իրականացվել է Չարենցավանի նստավայրում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը սույն վարույթը ճիշտ ընդդատությամբ ստանալով և ՀՀ քրեական դատավարության

[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելով, դրսևորել է ձևական մոտեցում[9]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ **քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից:**

Հաշվի առնելով վարույթի տարածքային ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ պաշտպաններ Ա.Խաչատրյանի և Դ.Վարդանյանի կողմից ******* ****** գործունեություն ծավալելը, և վերջինների՝ ***** ******* բնակվելու վերաբերյալ հստակ տվյալների բացակայությունը, ինչպես նաև այն, որ որևէ հիմնավորում չի ներկայացվել, թե քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելը որքանով է անհրաժեշտ արդարադատության շահի տեսանկյունից, հատկապես հաշվի առնելով, որ սույն վարույթով քննությունն իրականացվում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Չարենցավանի նստավայրում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

փոխանցել՝ վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում՝ **դրսևորելով խիստ ձևական մոտեցում:**

14. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

15. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԿԴ/0940/01/26 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ